Կատվալյան Վիկտոր (ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԿԱՐԲԻԻ ԽՈՍՎԱԾՔԸ ԻԲՐԵՎ ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԻ ՏԱՐԲԵՐԱԿԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ[1]

Արագածոտնի մարզի Կարբի գյուղի ներկայիս բնակիչների նախնիների մի մասը եկել է Բայազետի գյուղերից 1829-1830թթ.: Եվ թեև բնակավայրում նախքան այդ էլ եղել է հայ բնակչություն[2], ժամանակի ընթացքում ընդհանուր հաղորդակցման միջոց է դարձել Բայազետի բարբառը [3] : Իբրև այս բարբառի տարբերակային դրսևորում՝ Կարբիի խոսվածքը [4] ուշադրության է արժանի նրանով, որ ի տարբերություն Գավառի տարածաշրջանում մայր բարբառի համախումբ գործառող խոսվածքների[5]՝ գործածվում է լեզվական այլ միջավայրում՝ շրջապատված բարբառային տարբեր միավորներ ներկայացնող խոսվածքներով, և կարող է հետաքրքրություն ներկայացնել թե՛ բարբառի ընդհանուր հատկանիշների դրսևորումների և թե՛ ինքնուրույն զարգացման յուրահատկությունների առումներով: Խոսվածքի ներկա վիճակը հետազոտելու նպատակով 2019թ. դաշտային աշխատանքներ ենք կատարել Կարբի գյուղում, անհրաժեշտ նյութ հավաքել հարցարաններով, բանավոր խոսքն ու զրույցը տեսաձայնագրելու եղանակով, դիտարկել ենք տարբեր սեռերի և տարիքի անձանց բարբառային խոսքը:

Կարբիի խոսվածքում իրենց արտահայտությունն ունեն Բայազետի բարբառի ձայնավորական համակարգին բնորոշ բոլոր հատկանիշները: Այսպես, բացարձակ բառասկզբում, բառասկզբի խուլերից և *մ,ն* ձայնորդներից հետո խոսվածքում գործառում է **ա** ձայնավորի շրթնայնացած տարբերակը՝ *ա*տաղ, պ*ա*նիր, կ*ա*տու, տ*ա*տի, ծ*ա*ռ, ճ*ա*մփա, շ*ա*փաթ, ն*ա*մակ և այլն: Նկատելի է, որ **ա**-ի շրթնայնացումը նույնքան ընդգծված չէ, որքան Գեղարքունիքի Սարուխան գյուղում, և մոտենում է Գավառ քաղաքի խոսվածքի համապատասխան հնչյունին: Բնիկ և փոխառյալ մի շարք բառերում, առանց

---

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18T-6B302 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

[2] Տե՛ս **Մ.Մանուկյան**, *Հայաստանի Հանրապետության մարզերը, քաղաքներն ու գյուղերը*, Ե., 2013, էջ 152-154, **Հակոբյան Թ.Խ. և ուրիշներ**, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 3, Ե., 1991, էջ 37:

[3] Այս բարբառի մասին տե՛ս **Վ.Կատվալյան**, *Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ*, Ե., 2016, «Ասողիկ» հրատ., 534 էջ:

[4] Խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1978թ. լրացված թիվ 254 տետրում:

[5] ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում և շրջակա մեկ տասնյակից ավելի գյուղերում, որոնց բնակիչների նախնիները 1829-1830թթ. գաղթել են Բայազետ քաղաքից և հարակից բնակավայրերից, հաղորդակցման միջոցը Բայազետի բարբառն է /տե՛ս **Վ.Կատվալյան**, նշվ. աշխ., էջ 29-30/:

որևէ օրինաչափության և ավելի սակավ, քան Գավառի տարածաշրջանի խոսվածքներում, դրսևորվում է **ա**-ի քմայնացած տարբերակ, ինչպես՝ *Աշ*տարակ, հ*աշ*կ, բ*ա*խտ*ա*վոր, լ*ա*ղ, դ՛*ա*ռը, ք*ա*ղբ*ա*թի, քյ*ա*ղ*ա*մ, ք*ա*սիբ և այլն: Խոսվածքին, ինչպես Բայազետի բարբառին ընդհանրապես, բնորոշ է բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղումը, օրինակ՝ խավնել, ուրխընալ, սօվրել, թաթխել, օղրղել և այլն: Բառավերջի **ա** ձայնավորը ավելացող բաղաձայնից առաջ դառնում է **է**, ինչպես՝ տրղէն, վրրէս: Հստակ արտահայտություն ունեն *է*, *ո* երկբարբառային հնչյունները՝ ձ՛ըմեռ, խեխճ, չոռս, հառավոտ և այլն: Միավանկ բառերի սկզբում նախնական *է,ո*-ի դիմաց առկա են *յէ*, *վո* կապակցություններ՝ յես, յեզ, յեփ, վոխ, վոտ, բազմավանկ բառերի սկզբում՝ *է, օ* ձայնավորներ՝ էրկանք, էրկաթ, օրօճալ, օղրղել: Բազմավանկ բառերի սկզբում *վո* և *յե* դրսևորվում են բաղադրություններում ու գրական լեզվից կատարված փոխառություններում, ինչպես՝ վորդեղից, յերգիր, յեռսուն և այլն:

Խոսվածքը պահպանել է Բայազետի բարբառի բաղաձայնական համակարգի հիմնական հատկանիշները ևս: Այսպես, հինհայերենյան բառաշերտի բառերի սկզբում գործառում են շնչեղ ձայնեղ բաղաձայններ /բ՛էրան, գ՛էլ, դ՛*ա*ն*ա*կ, ձ՛ի, ջ՛ուր/, բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց առկա են շնչեղ խուլեր /առթար, դ՛առցընել, յերք, տէքրր, ջ՛առթել, հէքուց, մառթ, միրք, օքտրվել/, նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ /աբրել, փագել, փէդ, դրբրօց, յերգիր, սուբ/: Գավառի տարածաշրջանի խոսվածքների մեծ մասի պես Կարբիի խոսվածքը ևս չունի քմայնացած հետնալեզվային հպականներ: *Նգն* հնչյունախմբի դիմաց *յն* է առկա *կայնել* ձևում: Բառասկզբի ձայնավորներից առաջ տարածված է *հ* հագագի հավելումը՝ հափ, հընգնել, հընգեր, հէռթիկ, հիմանալ, հառավոտ, հ*աշ*կ, Հէրէվան, հիրկուն, հէսօր, հէքուց, հուրիշ և այլն: Հինհայերենյան բառաշերտում նախնական *հ*-ի դիմաց *խ* է հանդես գալիս բոլոր դիրքերում /խազալ, խավնել, խինգ, խին, խիվանդ, խէր, խող, խոր, պախել/, սակայն նկատելի է, որ հաճախ սովորական է դարձել նաև *հ*-ի արտասանությունը /մըհատ, պահել, հասկընալ, հառսնիք/, առանձին դեպքերում էլ խոսողները ըստ հնարավորին խուսափում են *խ*-ից: Բառասկզբում՝ *ո*-ից առաջ, *հ* հագագի դիմաց *ֆ* է առկա *ֆոտ* />հոտ/ բառում, որը ակնհայտորեն հետևանք է շրջակա խոսվածքների /Մուղնի, Փարպի, Աշտարակ/ ազդեցության: Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* /կազան, կօնախ, կօչաղ, կըրաղ, կուշ, կութի/, սակայն երբեմն խոսողներին ավելի սովորական է թվում *ղ*-ով ձևը, ինչպես՝ ղուշ, ղըշեր: Հաջորդ բաղաձայնից առաջ հպաշփականները կարող են վերածվել շփականի /մէշկ, հիշնել, կըսկըվել, ծասկ/: Շեշտը խոսվածքում վերջնավանկային է:

Ինչպես Բայազետի բարբառի բոլոր դրսևորումներում, այնպես էլ այս խոսվածքում առավել տարածված են *էր, ներ* հոգնակերտ մասնիկները, որոնց գործածությունը հիմնականում համընկնում է գրական լեզվի իրողությունների հետ

/բ՛ախեր, քուրեր, պըղընձներ, կատվըներ, յեզներ, ձ՛եռներ/: Սակավ դեպքերում գործածական են նաև *ք, էրք, իք, անք, անիք, վանք, տինք, ռանք* հոգնակերտները /լէնինականցիք, էրէխէք, դարվազէք, տըղէրք, մառթիք, ձ՛իյանք, կընանիք, իշվանք, գ՛իլվանք, ախպըրտինք, գ՛եղրանք/: Սրանցից *տինք* հոգնակերտի առկայությունը կարող է պայմանավորված լինել Արարատյան բարբառի ազդեցությամբ, որովհետև Բայազետի բարբառում գործածական է *տանք* հոգնակերտը, որոշ խոսվածքներ էլ ունեն *տիք* ձևը[6]:

Կարբիի խոսվածքում իրենց կայուն արտահայտությունն ունեն հոլովական համակարգի՝ Բայազետի բարբառին բնորոշ հատկանիշները: Այսպես, հատուկ տեղանունները ենթարկվում են Ա վերջադրական հոլովման /Աբարանա, Դիլիջանա, Կիրօվականա, Հէրէվնա/: Սրանց պես է հոլովվում նաև *թունդիր* հասարակ անունը /թունդըրա, թունդըրան/: Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը ձևավորվում է *յ*-ով /Լիպօյ, վէդրօյ/: *Ոջ* հոլովումը հիմնականում դրսևորվում է *տէր* բառի դեպքում /տիրոչ/, սակայն գործածական է նաև *հընգերոչ* ձևը, որը թերևս ազդեցության արդյունք է: Բացառական հոլովն ունի *ց*-ով վերջավորություն /հազարից, էրկըթից/: Կարբիի խոսվածքում ևս ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է հայցական հոլովով կամ սեռականով և *մէչ* կապով /տըղէն դըբրօցն ա, ձ՛եռի մէչ/: Որոշիչ հոդը դրսևորվում է *ը* և *ն* տարբերակներով /լէնինականցիքը, վոտին, տունն ա/: Անորոշ հոդը նախադաս է /մէ բ՛ան/: Անձնական դերանունները տրական հոլովում ունեն *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի*: Գործածական է *քեզի* դերանվան *քե* կրճատ ձևը, որը, ի դեպ, հատուկ է Բայազետի բարբառի բոլոր խոսվածքներին՝ ի տարբերություն *մե, ձ՛ե* կրճատ ձևերի, որոնք գործածվում են խոսվածքների փոքր մասում[7]: Ցուցական դերանունները խոսվածքում ունեն եռաշարք համակարգ /էս, էտ, էն, էսի, էտի, էնի/: *Ով* դերանվան դիմաց գործածվում է *վորը* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը*[8]: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ յես, իմ, մենք, մեր, դ՛ու, քօ, հինքը, հիրանք, հիրանց, ընդուն, ըտենց, ընենց, ընդ*ա*ր, իմալ, հընչի, վոր մէկը, հուր, ամէքը և այլն:

Բայական համակարգում ևս Կարբիի խոսվածքը հարազատ է մնում Բայազետի բարբառին: Սահմանականի ներկան և անցյալ անկատարը կազմվում են *ում* վերջավորությամբ անկատարով /տանում ենք, սօվրում ի/: *Գալ, լալ, տալ* բայերի անկատարի ձևերն են՝ գ՛ալում, լ*ա*լում, տալում: Վաղակատար դերբայն ունի *ր-ով* վերջավորություն /տէսէր, խավներ/, օժանդակ բային հաջորդելու պարագայում՝ *է* վերջավորություն /չինք տէսե, էնի յա քընե/: Վերջին ձևը առանց օժանդակ բայի կարող է

---

[6] Տե՛ս **Վ.Կատվալյան**, նշվ. աշխ., էջ 277:

[7] Տե՛ս **Վ.Կատվալյան**, *Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր, Գիրք 1, Գեղարքունիքի մարզ*, Ե., 2018, էջ 57:

[8] *Վորը, վիր, վիրը* ձևերը հատուկ են Բայազետի բարբառի խոսվածքների մեծ մասին, սակավ դեպքերում գործածվում են *վոնը, վի, վին* ձևերը /տե՛ս **Վ.Կատվալյան**, *Բայազետի բարբառը և նրա առնչությունները շրջակա բարբառների հետ*, էջ 358/:

արտահայտել վաղակատար ներկա ժամանակաձևի եզակի երրորդ դեմքի իմաստ /*փագե՝* փակել է, *քընե՝* քնել է/: Վաղակատար ներկայի հոգնակի թվի երրորդ դեմքի իմաստը կարող է արտահայտվել *ած* վերջավորությամբ դերբայական ձևով՝ նաև առանց օժանդակ բայի /*տէսած՝* տեսել են, *գ՛ացած՝* գնացել են, *մացած՝* մնացել են/: Հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն /քընուկ, նըստուկ/: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ եմ, ես, ա, ենք, էք, են, անցյալի ձևերն են՝ ի, իր, էր, ինք, իք, ին: Ժխտական խոնարհման վերլուծական ժամանակաձևերում օժանդակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքի ձևը չի արտահայտվում, և ժխտական մասնիկը դրվում է ուղղակի դերբայի վրա /չըտանում, չասում, չըգ՛ըրա, չուտա, չըբ՛էրե, չէկե/: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի հիմքերից /շինէցին, կանչէցի, պախի, բ՛էրին/: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ գ՛աց, մաց: Անցյալ կատարյալը և Ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականն ունեն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ /թողեց, բ՛օվինք, ջ՛առթըվավ, քընավ, փագա՛, ծածկա՛, նըստի՛, կայնի՛/: Խոսվածքում չկան *չ* ածանցով բայեր /փախնել, թըռնել/: Գործառում է պատճառական *ցըն* ածանցը /շըվըցընել, սօվըռցընել/: Այս բայերի եզակի հրամայականն ունենում է ա վերջավորություն՝ կայնըցըրա՛, հասկըցըրա՛: Հարկադրականի եղանակիչն է՝ պըտի /պըտի տանես/:

Կարբիի խոսվածքը բառապաշարով ևս հիմնականում հարազատ է մնում Բայազետի բարբառին: Ընդհանուր բառերից են՝ բ՛աժվել /մեծ ընտանիքից բաժանվելով՝ նոր ընտանեկան օջախ կազմել/, ճօլան-ճօթան /ասվում է ծանրակշիռ, լավ հագնված տարեց կնոջ մասին/, մառթ /ամուսին/, խառնիս, միյնակ, կայնել, ք*ա*ղբ*ա*թի, գ՛ունդ /խմորագունդ/, սօվըռցընել, ջ՛օկ /առանձին/, հէռթիս, թունդըրա շուռթ, քուռսի, կախվել /նստել՝ ոտքերը կախած թոնրի մեջ/, ջէջիմ /կապերտի նման գույնզգույն փռվածք/, ջըվալ /մեծ պարկ/, փէշտըմալ /գոգնոց/, փէժգիր /սրբիչ/, յավաշ /կամաց/, թ*ա*ք /միակ/, մալակօնդի /տնփեսա/, յեսիմ /չգիտեմ/, իմալ, պըստի, խաբար, կօլօտ, կօչաղ /ճարպիկ, գործունյա/, պըղինձ /մեծ կաթսա/, կազան /մեծ կաթսա/, կօնախ /հյուր/, կըրաղ /եզր/, ճիժ, թարախօրօվ /թերախորով/, ծէծել /միսը մշակել՝ թակով շարունակ հարվածելով/, գ՛ընդել /խմորը գնդերի վերածել/, կայնել, պաղել /սառչել/, խօսկ ու խաբար /ավելորդ խոսակցություն/, սաղլամ /ամբողջական/, բօռալ /գոռալ/, օրօճալ, օղըղել, էրկանք, դուզ, ժօղօվկըրան /մուրացկան/, շիքել /շինել/, մըխտ*ա*ռ /կեղտոտ/, կօնախ /հյուր/, հիրկուն, տուն ու տեղ, դ՛ար ու դ՛աշտ, կանալ /կարողանալ/, ախտ հըլնել /հաղթող լինել/, հիշկալ /նայել/, խառըխըշտիկ /խառնիխուռը/, թէդրափօխվել /փետրափոխվել/, դարվազ /դարպաս/: Բնականաբար կան նաև զանազանություններ: Այսպես, Բայազետի բարբառի *մէ խաստ* կամ *մէատ* ձևերի դիմաց Կարբին ունի *մըհատ*, *կօկօլ վառեկ* ձևի դիմաց՝ *կօլ վառեկ* ձևերը: Մայր բարբառում *կօլթեվ* բառն ունի «կարճաթև», ինչպես նաև «թևը կտրած» իմաստները, Կարբիում՝ միայն վերջին իմաստը: Կարբիի խոսվածքի *միրզամ* /աներձագ/, *ծակըռտըվել* /եռալով պղպջակներ առաջանալ/, *կօտօրան* /թթու դրված

բանջարեղենի տեսակ/, *զընգըլակ* /փոքր ողկույզ/, *ծառծակիչ* /փայտփորիկ/, *մըռզակալել* /արմատակալել/, *վէկալել* /վերցնել/, *սըլ թալել* /սայթաքել/ ձևերը անծանոթ են մայր բարբառին և այլն:

Այսպիսով, Կարբիի խոսվածքը ներկայանում է իբրև Բայազետի բարբառի տարբերակային մի դրսևորում, որը թույլ է տալիս փաստել, որ ընդհանուր հատկանիշները բարբառի համար բնութագրական են եղել դեռևս բնօրրանում՝ Բայազետում, իսկ խոսվածքում դրսևորվող յուրահատկությունները հիմնականում բարբառային նոր միջավայրի ազդեցության արդյունք են:

Катвалян Виктор – Говор села Карби как вариант Баязетского диалекта.- Говор села Карби является вариантом Баязетского диалекта. Это позволяет утверждать, что общие признаки были характерны для диалекта еще в старой родине - Баязете. Отличительные черты говора в значительной степени являются результатом влияния новой диалектной среды.

Viktor Katvalyan - The Speech of the Karbi Village as a Variant of the Bayazet Dialect .- The speech of the village of Karbi is a variant of the Bayazet dialect. This allows us to insist on the fact that the common features were characteristic of the dialect still in the old homeland - in Bayezet. Non-shared features of the speech are resulted mainly by the influence of a new dialectal environment.